

## ՆՈՐԻՆԱՅՈՒԹԻ ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ. Զ Գ Գ Ե Ն Ս Կ Մ Թ Ո Ղ Ի Կ Ա Ս Ի ՀՈՎ Վ Ս Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ս Ց Ց Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Ե Ր Ա Կ Ի Թ Ե Մ Ի Ն

Ապրիլի 26-ին, ուրբաթ օր, նորին Ս. Օծովյուն Վեհափառ Հայրապետը հովվական այցելով վեհապետի մեջնեց Շիրակի թեմը, տանելով Իր հետ լուսավորչի կանթեղից Հավատի սրբազն հուրը, դրանով վառելու համար մի անգամ ևս Շիրակի թեմի պատվական հայ հավատացյալ ժողովրդի սրբաբերը: Շիրակի պատմական թեմը անհամբեր սպասում էր Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելով վեհապետի:

Մեկնումից առաջ, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի ողջ միարանովյան ուղղեցով վեհապետի հշակ Մայր Տաճար աղոթելու, և ապա օրհնելով ներկա հղող հավատացյալ ժողովրդին ու միաբանովյանը, մեկնեց երևանի կայարան:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար կայարան էին եկեղ Մայր Աթոռի միարանովյանը, իրենց դուսին ուսենալով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերապատիվ Տ. Վարդան և Տ. Եղիշի սրբազն եղին եպիսկոպոսները: Կայարան ողջերթի էին եկեղ նաև մայրաքաղաքի եկեղեցիների քահանայից դասը և եկեղեցական խորհուրդները, Մայր Աթոռի պաշտոններով մեմանանի դասախոսական կազմը և հավատացյաների մի մեծ խումբ: Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար կայարանում էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովորին առջնորդը Հայ Եկեղեցու գրիգորի խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը, մամուկի ներկայացուցիչներ և թղթակիցներ:

Հովվապետական այս օրհնաբեր այցելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղղեցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջնապետ և Մայր Տաճարի լուսարարա-

պետ գերաշնորհ Տ. Սահակ արքապիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գալազանակիր հոգեցնորհ Տ. Եղիշի վարդապետ Սարգսյանը, Մայր Աթոռի գիւղանապետ պ. Հայկ Առաքելյանը և բարեհնորհ Գառնիկ սարկավագ Մառուկյանը:

Ժամը 3.40-ին, ծափերի որոտի տակ, գնացքը շարժվեց դեպի կենդինավան:

Շիրակի թեմը մեր հայրենի ընդարձակ և կարեռը թեմերից մեկն է, որն իր մեջ ընդգրկում է այժմ Շիրակի գաշտավայրի վրա փոված հայկական գյուղերն ու ավանները, Կիրովական և Ստեփանավան քաղաքները, Թալին ու Հոկտեմբերյան գյուղաքաղաքները: Ահա մի այսպիսի մեծ ու պատմական թեմի հովվապետական այցելովյուն էր տակիս Ամենայն Հայոց Հայրապետը, տանիքով իր հետ նաև օրհնովյունները Մայր Աթոռի հազարամյա քարերի, ամեսիսը մեր օրերի Հայ Եկեղեցու վերապարթունիքի և ողջունը հավերժական Մասիսի....

Գարնանային այս օրերին, տրքան գրավիշ ու խոստան են Շիրակի ընդարձակ, կանաչազարդ գաշտերը, որոնց հարուստ կուրծքը ճեղքելով, հայրենի բնաշխատիրի գեղեցկովյունների միջով առկում էր գնացքը: Երեկոյան ժամը 9.30-ին գնացքը երկար սուրոցով ազդարարում է Վեհափառ Հայրապետի ուրախառիթ մուտքը կենինական: Վեհափառ Հայրապետի ժամանումից կեռ շատ առաջ կայարան էր հավաքել Հավատացյաների խուռն բազմություն: Նորին Վեհափառությանը սրտագինս և արժանավայել Հանդիսովյամբ դիմավորելու համար կենինականի կայարանն էին եկեղ Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեցնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը,

քահանայից դասը և թեմական խորհրդի անդամները:

Կայարանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրության նախագահի Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը, Լենինականի տեղական իշխանության պատասխանատու բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ այդ թվում Լենինականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի քարտուղար պ. Սամսոն Հեքիմյանը և քաղաքային Սովետի Կուսուր-լուսավորական բաժնի վարի պ. Սուրեն Հարությունյանը, Հայաստանի Հեռագրական գործակալության ու տեղական թերթերի թղթակիցներ:

Երևանից Լենինական ժամանող գնացքը կանգ առավ վերջապես կայարանում: Թնդաց ծափահարությունների զվարթ որոտը, մինչ այդ երևաց Վեհափառ Հայրապետը իր պարթին հասակով, Հայրական ժամանակի տեղադրին, հովվական ասան ձեռին, իր շքախմբով շրջապատված: Վեհափառը գնացքի սանրուցների վրայից օրհնեց բոլորին և ժողովրդի խանդավառ ու սրտառուշ արտահայտությունների մեջ առաջնորդվեց կայարանի ընդունելության մեծ դաշիճը, որտեղ մի փոքր դադար առնելուց հետո, բազմաթիվ ավտոմեքենաների տուեկցությամբ, առաջնորդվեց Լենինականի Հայոց առաջնորդարանը, ուր Հավաքվել էր նմանապես Հավատացյաների մի մեծ բազմություն: Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, ապա բարձրացավ առաջնորդարան, ուր Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Հոգենորդ Տ. Կոմիտաս վարդապետ Տիեր-Ստեփանյանը, հանում Շիրակի թեմի հայրենասեր և Հավատացյալ Հայ ժողովրդի, բարի գալստյան սրտապին խոսքեր ասաց, թարգմանը Հանդիսանալով բողոք ներկաների զգացմունքներին և նրանց զեպի Մայր Աթոռն ու Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետը տնեցած նվիրվածության ու երախտագիտությանը:

Վեհափառ Հայրապետը իր պատասխան խոսքի մեջ ասաց.

«Մենք այս պահուս շատ հոգված ենք: Հուզված ենք մանավանդ ձեր այսինքն խանդավառ ընդունելութենքն և ձեր բարի ողջույնի խոսքերնեն: Մենք շատ կգնահատենք ձեր առաջնորդական տեղապահի ժրաշան ու եկեղեցաշեն գործը, որը անջույղ Մեզ շատ կուրախացնեն և կմխիթարեան: Մենք ալ մոտեն ենաւած ենք ձեր թեմի հոգելոր գործերուն և բավարար գտած ենք զանոնք: Կնորդարենք ա'լ ավելի համախմբիլ Կոմիտաս Հայ Սուրբի շուրջը և այդ ձեռվ ա'լ ավելի օգտակար ըլլալ մեր Եկեղեցին: Այս պահուս կշեշտենք Մեր խորունի հուզումը մանավանդ

անոր համար, որ առաջին անգամ առիրը ներկայացավ գալու ձեր զեղեցիկ բաղադրի և բերելու ձեզ Մեր հայրապետական օրինությունն ու գնահատանքի խոսքը»:

Վեհափառ Հայրապետի խրախուսիլ այս խոսքերից հետո սկսվեց աշահամբույրը: Բոլորի սրտապին ցանկությունն էր մերձենալ Ամենայն Հայոց Հայրապետին և ստանալ նրա օրհնությունը:

\*\*\*

Ապրիլ 27, օրը շաբաթ: Վեհափառ Հայրապետը Լենինականի Հայոց առաջնորդարանում բարեհաճեց ընդունել անհատական և պաշտոնական բազմաթիվ այցելություններ:

Առավոտյան ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց քաղաքովետի շնորհում Լենինականի քաղաքային Սովետի նախագահ պ. Լ. Քոչարյանին, արժանանարով շերմ ընդունելության: Վեհափառ Հայրապետին ուղիղում էին Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Հոգենորդ Տ. Կոմիտաս վարդապետը, գալուղանակիր Հոգենորդ Տ. Նողշե վարդապետը և Մայր Աթոռի գիւղանապետ պ. Հայկ Առաքելյանը:

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկան ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հրաչյա Գրիգորյանը:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը ողջունելով պ. նախագահին, ասաց:

«Հովվական այցելուրյամբ եկած ենք Շիրակի մեր թեմը, մսիրաւելու մեր հավատացյալ հոտին: Այս առիրով շատ ուրախ ենք, որ կայցելենք նաև Ձեզ: Ուրախ ենք մահավանդ արտահայտելու Մեր գոհունակությունը, որ այս անգամ ավելի մեծցած ու գեղեցկացած կտևենքն Լենինականը, ուր ամեն բայի կնկատվին շինարարական մեծ աշխատանքներ, որոնց արդյունքը պատի ըլլա ձեր այս քաղաքի ա'լ ավելի բարեգարումը և գեղեցկացումը»:

Ապա Վեհափառ Հայրապետի և քաղաքային Սովետի պ. նախագուհի միջև տեղի ունեցավ սիրալիր խոսակցություն, որի ընթացքում պ. Լ. Քոչարյանը հանգամանորեն ծանոթացրեց Վեհափառ Հայրապետին Շիրակի Հայ ժողովրդի կյանքին և այն հսկա շինարարական աշխատանքներին, որոնք կատարվել են կատարվել Լենինականում և առհասարակ Շիրակի դաշտում: Վեհափառ Հայրապետն իր անհուն ուրախությունը հայտնեց Հայրենի երկրի շինարարության ասպարեզում ձեռք բերված նորանոր հաջո-

դությունների համար և հրաժեշտ առավական ապագայն տպավորություններով, օրհնեց հայրենի իշխանությանն ու մեր ստեղծագործ շինարար ժողովրդին:



Նույն օրը ժամը 2-ին Վեհափառ Հայրապետն այցելեց հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներից մեկը հանդիսացող Հառինա նշանափոր վանքը, որը գտնվում է Լենինականից 35 կիլոմետր հեռավորության վրա և կառուցվել է Զաքարի և Իվանն հայ իշխանների կողմից: Հառինա վանքը կառուցված է փոքրիկ բլրաձև բարձրության վրա, իսկ հարավ-արևելքից խոր, անդնդանման ծորն է, որի միջից հոսում է սառնորակ աղբյուրների ջրերից կազմված գետակը: Այդ հոչակալվոր վանքի կողքին գոյություն է ունեցել պիշեռութիկ դպրոց, որտեղ Մեսրոպյան տառերով սովորել են բազմաթիվ հայ պատանիներ և երիտասարդներ՝ ճշմարտորեն ծառայելու հայ ժողովրդին, Հայ եկեղեցուն և հայ մշակույթին: Այսօր էլ այդ նույն վանական դպրոցի շենքում ստվրում են նույն և հարևան հայ գյուղերի 350 աշակերտներ:

Ավտոմեքենաները կանգ առան այդ Հրաշակափոր հուշարձանի գլխավոր մտառքի առջև: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել ողջ գյուղի բնակիչները և դրաբոցի աշակերտները: Իրենց տառացիշների գիւղավորությամբ: Վեհափառ Հայրապետը այցելեց վանքը, նաև վանքի բակում գտնվող միջնակարգ դպրոցը, իր հայրական օրհնությունը տվեց աշակերտներին և դաստիարակ տառացիշներին, մաղթելով նրանց ուժ և կարտողություն՝ վառ պահելու համար Մեսրոպյան լեզվի և հայ դպրության սերը մեր մատաղ սերնդի՝ մանուկների և երիտասարդների սրտերում:

Ազգի Սրբազնագույն Հայրապետը լավագույն տպավորություններով վերադարձավ Լենինականի:



Հարաթ երեկո է: Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու ներսն ու դուրսը, ինչպես նաև ամբողջ շրջակայքը հայլաքվել է ծովածավալ բազմություն, պատշաճ կերպով դիմավորելու և հարգանք մատուցելու Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին: Դողանքում են զանգերը և հայու համատափոր հոգին լցվում է երանությամբ, երկու դաշտավառ-ով և հանդիմությամբ: Շրաշափառո-ով և հանդիմությամբ, եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է եկեղեցի:

բաշխելով իր հայրապետական օրհնությունները իր շուրջը եղող հազարամուր հավատացանակին և նախագահում է կիրակամտի ժամանելության:

Հավարտ ժամերգության Վեհափառ Հայրապետը քարոզում է ժողովրդին՝ փոթորկելով հավատացյալ հոգիները.

«Յանուն Հօր և Ուրբայ և Հոգուն Մրոյ, ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, ձեզ բոլորիդ բերում ենք սիրո ողջուն և օրինուրուն հայրապետական ամենայն հայոց Մայր Արքու Ս. Էջմիածնից, Ս. Գրիգոր Լուսավորչի Գանից, Խմբան Ս. Սեղանից, Արարատյան դաշտից, մեր հավիտենական Մասկանիներից:

Ողջո՞ւն այս եկեղեցու նովեր դասին, որի գույխը կանգնած է շնորհալի առաջնորդական տեղապահ Կոմիտաս Հայր Սուրբը, որի գործակիցներն են բանականերն ու խորհրդի անդամները: Ողջո՞ւն, լավագույն մարդաներով, Լենինականի հավատացյալ ժողովրդին:

Սիրելի հավատացյալներ, Ս. Գրիգում ասված է՝ լավ է, որ եղբայրներ միասին լինեն՝ միախորհուրդ և սիրով միարան: Հայ ժողովրդի զավակները սիրով իրար են կապված են մնացել մանավանդ Ս. Եկեղեցու կամարների տակ: Մեր հայրերը կառուցել են տաճարներ, Աստուծուներ, որ մեր հավատացյալները այստեղ աղքատ աղքատ և իրար ողջուննեն որպես հարազատ եղբայրներ և որդիներ միևնույն Աստուծու, այստեղ սիրեն միմյանց և լինեն «մի հօտ և մի հովիս»:

Այս բաղադրի նախանայրերը կառուցել են փառավոր վաներ և եկեղեցներ: Յորվեր եկեղեցու անունը ծանոր է ամբողջ աշխարհի հայության: Արտասահմանում ասում են, որ մենք մի հատ Յորվեր ունենք, այն էլ Լենինականում է գանձում: Մեր հավատավոր նախնիք այստեղ կառուցել են նաև Ս. Գրիգոր, Ս. Նշանը և փառավոր վաներ, որոնցից մին Հայության վանը, առիր ունեցան այսօր այցելելու, ապա Մարտաշներ և մյուները, որոնք մեր փառքն են կազմում մյուս մին կորպոների են միասին:

Մենք Մեր օրինուրյունն ենք բերում Լենինական քաղաքի ու շրջանի բոլոր գյուղերի մշակներին, բանվորներին, բազուկով և մրացով բոլոր աշխատողներին և դեկանացներին, որոնք շինացնում, ծաղկեցնում և զեղեցկացնում են մեր Հայրենիքի երկրորդ քաղաքը:

Այս է մեր Տիրոջ պատվերը՝ ապրենել սիրով և նույն հավատով, լինենք շինարար և առաքինակը:

«Յատել ի մեզ, Տէր Ամենակալ, զհաւաս, զյոյս, զսէր և զամենայն գործ առաքինութեան»:

Սիրելի ժողովուրդ Լենինականի, մաղքում ենք ձեզ մարմելի և նոգու առողջություն, արեշտադրյում, մաղթում ենք աստվածասեր գործոց լիակատար հաջողություն»:

\*\*\*

Ապրիլ 28-ի է, նոր կիրակի, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում Հայրապետական Հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Վեհափառ Հայրապետը: Սուրբ պատարագից դեռ շատ առաջ Հսկա եկեղեցին և վերնատունը լցվել է Հավատացյալ հայ ժողովություն, ժամը 11-ին, Հայրապետական լրիվ զգեստավորումով, Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով, մոմով ու խնկով և

է քար լոռություն և վեհության մեջ հնչում է Վեհափառ Հայրապետի ձայնը.

«Յանուն Հօր և Արդոյ և Հոգոյն Մրոյ, ամէն»:

«Քրիստոս յարեա՞ ի մեռելոց»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, Քրիստոսի հարուրյան ավետիսով այսօր բերում ենք ձեզ ողջուն կենարար ամենայն հայոց Մայր Տաճարից, աստվածակառույց իշման Ս. Սեղանից:

Մինչեւ մեր Փրկչի Համբարձման տոնը գտնվում ենք հարուրյան շնորհների ներ, ո՞ւ և բարասուն օրերի բնբացքում միմյանց ողջունում ենք ասելով՝ «Քրիստոս յարեա՞ ի մեռելոց»:

Այս կիրակին կոչվում է նոր կիրակի, որովհետև Զատկից հետո առաջին կիրակին է, որ տոնում ենք նույն ոգով ներշնչված: Քրիստոսի հարուրյան հիշատակը ամբողջ



ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԱՐՈՉՈՒՄ Է ԼԵՆԻՆԱԿԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի: Սուրբ պատարագին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և վարդապետ Հայրերը: Երգամ է Լենինականի եկեղեցու երկսեռ քառաձայն խումբը, հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետի զեկավարությամբ: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզում է: Եկեղեցում տիրում

տարվա բնբացքում գտնվում է կենտրոնական տեղում և լույս է սփռում մյուս բոլոր օրերի վրա: Անա թե ինչու ամեն Քրիստոնյա խոր ոգերուրյամբ դիմավորում է Զատիկը, վասնզի Քրիստոսի հարուրյան հշանակությունը իրոք որ մեծ է և սուրբ: Առանց Հիսուսի հարուրյան իրողության Քրիստոնեական մեր հավատը պիտի իներ տկար:

պիտի պահսկուր նիմենական ուժը, որովհետև մասնվաճեղ նարությամբ է, որ դավանում ենք Հիսուսին որպես Աստված Որդու: Մարդկանցից ոչ ոք, բացի մարդացայլ Քրիստոսից, նարության շառավ: Նա և մասնաւմը զանակ կոխուաց և յարութեամբ իրավ մեզ զիեան պարգևեաց: Անս թե ինչու 2000 տարիներից ի վեր մարդկությունը դավանում է նրան որպես Աստված: Իր երաշափառ նարությամբ նա հիմք դրեց մեր նավատի ու եկեղեցու:

Սիրելի նախատացայլ ժողովություն, այսօր մեր եկեղեցին տունում է նաև տնուու մի հիշատակ: Այսօր մեր Ազգի նախատակաց հիշատակի օրն է: Հարց պիտի տաք, թե ինչու մեր եկեղեցին իր նախատակների, ներառների հիշատակը տունում է նոր կիրակիին: Հայ Ազգը, ինչպես քաջ գիտեք, ունեցել է դժբախտ կյանք: Հայ ժողովուրդը ապրել է հայածական, ապրել է արցունքին ու տառապանքի բազուն օրեր: Հայ ժողովուրդը նախատակվել է և կոտորվել: Համաշխարհային առաջին պատերազմի ժոմանակ մոտ մեկ միլիոն ժողովուրդ բնաշեցվեց Թուրքիայում, որոնցից շատերը նախատակվեցին անհայտ շարշարակների մեջ, անապատներում: Մի կերպ ազաւակած հայ ժողովոյն մյուս մասը ցրվեց աշխարհով մեկ և այսօր էլ ապրում է Հայրենիքից նեռու, պանդիստուրյան մեջ:

Այսօր մենք ոգֆիոշում ենք այդ անմեղ զնիւրի սուրբ հիշատակը և աղորում երանց նոգիների համար:

Բայց անա ծագեց նաև Համաշխարհային երկրորդ պատերազմը, որին դուք ականատես եղաք, և ինչպես սովորական մյուս ժողովուրդները, այնպես էլ նայ ժողովուրդը, տվեց նոր նախատակներ Հայրենիքի պաշտպանուրյան համար: Թշնամին հարձակվեց գիշերաեց, գողի հման. ի՞նչ կմընար անել, երե ոչ զեն ի ձեռին պաշտպանել Հայրենիք նողը: Այդ պատերազմում, որ կոչվեց Հայրենական պատերազմ, գիտեք ինչքան զնիւրի տվեցին պատասխեր ժողովուրդները:

Մենք պետք է աղորենք այսօր նաև երանց նոգիների համար, որոնք ընկան վասն Հայրենյաց և ժաղովրդի: Աստված լուսավորի երանց նոգին և արժանացնի երկնային արքայուրյան և անքառան պատկին: Բայց երբ մենք աղորում ենք մեր նախատակների և ներուների համար, շվետք է նաև մոռանեմք աղորել, որ Աստված նր ձեռքը հովանի և պահապահ անի մեզ մրաւ, որպեսզի այսումեալ պատերազմներ չինեն, ժողովուրդները միմյանց ենու պարեն հաշու ու խաղաղ, որպեսզի մեր ժողովուրդը, իր խաղաղ ու շինարար կյանքով, է՛լ ամելի ծաղ-

կեցնի ու շենացնի մեր երկիրը, մեր նոր Հայրենիքը: Հարուցյալ Հիսուսի հման, հայ ժողովուրդն իր մամվամբ մաքր նաղբեց ու վերածնվեց:

Աստված ուժ ու եռանդ պարզեի հայ ժողովրդին, Սովետական Հայաստանի կառավարության, բոլոր հայ զորականներին ու շինականներին, աշխատավոր մարդկանց և մշակույրի գործիչներին, որոնք իրենց բազկով, հոգով և մտքով կառուցում են մեր նոր Հայրենիքը:

Աղորում ենք ձեր արեջատուրյան համար, աղորում ենք, որ Աստված ձեզ պահի, որպեսզի ձեր զավակներով ու բռներով ձեր օշախների շուրջ միշտ շեն մեան և ձեր բաժինը բերեք Հայրենիքի վերաշինուրյան սուրբ գործին: Բոլոր հայ նարկերի տակ բռու լինի խաղաղուրյուն:

«Ենարեք, սէր և խաղաղուրին եղիցին ընդ ձեզ, ընդ ամենենեանդ, ամէն»:

Հավարտ սուրբ պատարազի տեղի տմեցավ Հանդիսավոր Հոգեհանգիստ՝ նվիրված պահուատր նահատակացն մերոց Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց:

Եկեղեցական սրբազան արարողությանց ներկա էր ժողովրդական աննախընթաց բազմություն, տրը սրտատրուի ու խորին լուսության մեջ սպասում էր համբուրելու համար Վեհապատու Հայրապետի U. Աջը:




Նույն օրը երեկոյան կենդնականի քաղաքավետի կողմէից, քաղաքութեանի շենքում, ի պատմիվ Վեհապատ Հայրապետի կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն, որունեղ ներկա էին արլիստի, գիտության ներկայացուցիչներ, մոտավորականներ և այլ պաշտոնական անձնավորություններ: Հրամիրյանիների թվուան էր Հայ Եկեղեցու գործիքի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը: Ընդունելությանը ներկա էին նաև կենդնականի քահանայից դասր, թեմական խորհրդի անդամները, առաջնորդական սեղապահ Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանի պետականությամբ: Ընդունելության ժամանակ քաղաքացին Սովետի պ. Համագործակց առաջին քածակը առաջարկեց Վեհապատ Հայրապետի կենացը, որ ընդունելուց ծափահարություններով: Եղան բազմաթիվ սրտատրու ու հայրենասիրական ճառեր, Կատարվեցին երգեր ու արտասանություններ, Վերջում հոսեցավ Վեհապատ Հայրապետը և շնորհակարություն հայտնեց շերմը ընդունելության համար, օրէնք Հայրենի պիտությանն ու մեր շինարար, ատեղծադործ ժողովրդին:

Ապրիլի 29-ին, երկուշաբթի առավոտյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Եփրակի թեմի համբ ժողովրդից: Վեհափառ Հայրապետի մեկնման կապակցությամբ խորություն բազմություն էր հավաքվել կայարանի ճանապարհին և մուտքի առջև: Վեհափառ Հայրապետը մեկնելուց առաջ իջավ եկեղեցի, աղոթեց, և ապա, բազմաթիվ ավտոմեքենաների ուղեկցությամբ, հասավ Լենինականի կայարանը: Ողջերթի

րի ճանապարհ են մաղթում Վեհափառ Հայրապետին: Գնացքի իր առանձնասենյակի լուսամուտներից Վեհափառը խաչակնքում է ժողովրդի վրա:

Դեպի Երևան...

Սորին Վեհափառությունը խանդավառ ընդունելության արժանացավ նաև Սնի Կայարանում, որտեղ հավաքված բազմությունը շերմորեն դիմավորեց Վեհափառ Հայրապետին, որ բարեհաճեց իշնել գնացքից, մնել ժողովրդի մեջ, օրհնել բոլորին և հոգևորիթ միահմարություն տալ հավատացյալներին:



ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՒՄ Է ԽԱՀԱՏԱԿԱՑ ԿԱՏԱՐԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ  
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

էին եկել Լենինականի քահանայական դասը, թեմական խորհրդի պատվարժան անդամները, եկեղեցու երկսեռ երկշախումբը՝ առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետի գլխավորությամբ:

Վեհափառ Հայրապետին ճանապարհոցին նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը և տեղական իշխանության ներկայացուցիչներ: Բաժանման վերջին րոպեներն են. Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում բոլորից, օրհնում է կայարանում հավաքված բազմությանը և բարձրանում է գնացք: Շարժվում է գնացքը: Հազարամուր ձեռքեր օդի մեջ բարձրացած՝ բա-

ժամը 2.30-ին Լենինականից եկող գնացքը հասավ Երևանի կայարանը: Կայարանի պաշտոնական ընդունելությանց դաշնիճում հավաքվել էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Ծեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոններունը, Երևանի քահանական դասը, եկեղեցական խորհուրդների անդամները և ժողովրդի ներկայացուցիչները, թղթակիցներ, մամուկի ներկայացուցիչներ:

Կայարանում ներկա էր նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառը դիմավորվեց ծափերով և ա-  
ռաջնորդվեց չննդունելության դահլիճ, ուր  
բարի գալստի խոսքեր արտասանվեցին:

Պաշտոնական ընդունելությունից հետո  
Վեհափառ Հայրապետը մեկնեց դեպի էջ-  
միաժին, որ եկեղեցական թափորով և «Հրա-  
շափառ»-ով առաջնորդվեց Մայր Տաճար, ա-  
ղոթեց իշման Ս. Սեղանի առաջ և ապա  
դարձավ դեպի ժողովուրդ և ասաց.

«Սիրելի միաբաննե՞ր, Մայր Արքոփ պաշ-  
տոնյանե՞ր և սիրելի ժողովուրդ.

Անա մի ժամի օր է, ինչ Մենք գտնվում  
էինք Շիրակի քեմում: Սուրբ Մատուկ և խոր  
հովզերով է, որ տարինք Մեր օրինությունը  
մեր Մայր Երկրի բաղաքերին ու զյուղերին,  
դաշտերին ու ձորերին, արտերին ու այգի-  
ներին, մեր հարազատ զավակներին, հայ-

շինականներին ու բալոր աշխատանքի մարդ-  
կանց, նամայն ժողովրդին և բոլոր հայրե-  
նաշեն զեկավարներին: Շիրակի քեմում  
Մենք զզացինք մեր ժողովրդի անկեղծ  
սերն ու հավատը դեպի մեր Ս. Ծկեղեցին: Մենք  
գոն ենք Մեր հանապարհորդությու-  
նից և վերադառնում ենք Մայր Արքո ա-  
ռավել լավատես:

Եկեղեցական նույն թափորով Վեհափառ  
Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, որ-  
տեղ «Պահպանիչ»-ով օրհնեց բոլորին:

Բարի վերադարձ մեր սիրելի և շինարար  
Հայրապետին:

Հետագային Վեհափառ Հայրապետը կայ-  
ցելի մեր նեղոթին մրտա թեմերը:

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

